

ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ Մյունիքի մարզում բացվում է հակակոռուպցիոն հանրային ընդունարան

ԳՈՐԻՍ, Հայաստան, 6 հունիսի 2008թ. -- Այսօր ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հովանավորությամբ Գորիսում՝ Մյունիքի հեռավոր մարզում բացվեց հակակոռուպցիոն ընդունարան:

Կենտրոնը խորհրդատվություն կտրամադրի քաղաքացիներին իրավաբանական հարցերի շուրջ, տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների և ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաև պետկադաստրի, անձնագրային, մոտարական գրասենյակների, և տեղական մակարդակով հանրային ծառայություն իրականացնող այլ մարմինների վերաբերյալ: Կենտրոնը նաև աջակցություն կտրամադրի դատական բողոքների ներկայացման հարցում՝ աշխատանքային իրավունքի, սոցիալական պաշտպանության, քաղաքացիական և վարչական իրավունքների հետ կապված:

«Գորիսի կենտրոնը կնպաստի տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառույցների թափանցիկությանն ու մատչելիությանը, որը օգտակար կլինի և՛ ծառայություն մատուցողներին, և՛ նրանցից օգտվողներին», - նշեց ԵԱՀԿ գրասենյակի ղեկավարի տեղակալ Մարկ Բոյանիչը:

«Քաղաքացիները հնարավորություն կունենան ստանալու խորհրդատվություն առօրյա շփումների ընթացքում ծագող բազում կարևոր հարցերի վերաբերյալ»:

Կենտրոնը կգործի «Միլենիում» կրթական հետազոտական ասոցիացիայի ղեկավարությամբ:

Կենտրոնը չորրորդն է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրի շրջանակներում գործող: Մյուս կենտրոնները բացվել են անցյալ տարի մայրաքաղաք Երևանում, Մարտունիում՝ Գեղարքունիքի մարզ, և Ստեփանավանում՝ Լոռու մարզ:

Գորիսի հակակոռուպցիոն կենտրոնի հասցեն է.

Անկախության փողոց 3, Գորիս
Հեռախոսահամար՝ /0284/ 22552